ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետություն Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնք

Գ. Նորակերտ 2 փող. 34 շենք հեռ. 094 01 21 65

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.10.2014թ. ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ

23.10.2014թ. գ. Նորակերտ

Կայացավ ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնքի ավագանու նիստը:
Նիստին ներկա էին ավագանու անդամներ՝ Գագիկ Սարգսյանը, Կարեն Ղազարյանը, Մանուկ Հակոբյանը, Վոլոդյա Սիմոնյանը, Վիտալիկ Վարդանյանը:
Նիստին մասնակցում էին հրավիրվածներ՝ Ա.Սարգսյանը- անասնաբույժ, գյուղապետարանի աշխատակիցներ՝ Կ. Առաքելյանը, Հ. Սարգսյանը, Ռ. Վարդանյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գ. Սարգսյանը
քարտուղար՝ Ս. Նշանյան

ՕՐԱԿԱՐԳ

1. Նորակերտ համայնքի 2014 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականի մասին:
( զեկ. Գ. Սարգսյան- համայնքի ղեկավար )
2. 2014 թ-ի աշնանացանի աշխատանքների անցկացման մասին:
( զեկ. Գ. Սարգսյան- համայնքի ղեկավար )

ԼՍԵՑԻՆ - 1. Նորակերտ համայնքի 2014 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին Գ. Սարգսյանի զեկույցը, ներկայացնելով երկրորդ եռամսյակի կատարողականը ծախսերի և եկամուտների մասով.
Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 16 –րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Ընդունել ի գիտություն Նորակերտ համայնքի 2014 թ-ի բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականը /կից ցուցակով/:
2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին մեկ շաբաթվա ընթացքում որոշման քաղվածքը ներկայացնել մարզպետարան համապատասխան բաժին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ՝ 5 դեմ՝ չկա ձեռնպահ՝ չկա